

## ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ազգակցական կապ ցույց տվող բառերի ծագումնային-ստուգաբանական խնդիրներին անդրադարձել են Հ. Աճառյանը, Գ. Ջահուկյանը, Հ. Ասմանգուլյանը: Ուշագրավ նկատառումներ ունի Լ. Սարաջևան, հատկապես հայ-սլավոնական զուգաբանությունները դիտարկելիս: Գ. Հակոբյանի աշխատանքում մանրամասն քննվում են 5-րդ դ. մատենագրության մեջ վկայված ազգակցական տերմինները, առաջարկվում դասակարգման նոր սկզբունքներ:

Հ. Խաչատրյանը քաջածանոթ է ոչ միայն նշված, այլև ուրիշ լեզվաբանների աշխատանքներին (քնականաբար նաև ոչ միայն հայերենին վերաբերող), որը և մեծապես օգնել է նրան գրքի կառուցվածքի, դասակարգումների ու ենթադասակարգումների, քննության եղանակների ու մեթոդների ընտրության գործում<sup>1</sup>:

Հեղինակի նպատակադրումը հստակ է՝ հայերենի բարբառների ընձեռած տվյալների հիման վրա կատարել ազգակցական հարաբերություններ արտահայտող բառակազմումների ամբողջական ու համակարգային քննություն, որն էլ կատարված է հիմնականում լեզվաբանական աշխարհագրության մեթոդներով, թեև ըստ անհրաժեշտության կիրառվում են նաև այլ մեթոդներ:

Նյութը քաղված է շուրջ 500 տարածքային միավորներից: Հազարից ավելի բառամիավորների դասոչասումը, հնչյունական, իմաստային, գործառական առանձնահատկությունների քննությունը լուրջ և դժվարին աշխատանք է, որին ձեռնամուխ է եղել Հ. Խաչատրյանը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հինգ գլխից և եզրակացությունից. վերջում, որպես լրացում-հավելված ներկայացված են մի շարք աղյուսակներ և քարտեզներ, որոնք ավելի տեսանելի և ընդհանրական են դարձնում հեղինակի կատարած աշխատանքը:

Գրքի գլուխների վերնագրերն ու ենթավերնագրերը բավականին ուրույն են և տեղեկատվական: Քննվող նյութն էլ ներկայացված է ըստ իմաստային շղթաների:

**Առաջին՝ բուն ազգակցական անուններ** գլխի առաջին իմաստային շղթայի մեջ մտնում են **հայր**, **մայր** երկրորդում՝ **երեխա**, **տղա**, **աղջիկ**, երրորդում **քույր**, **եղբայր** բառանվանումները: **Երկրորդ գլխում** քննվում են միջնորդավորված արյունակցական հարաբերությունների անունները. **տատ**, **պապ**, **քեռի**, **մորաքույր**, **հորաքույր**, **հորեղբայր**, **հորեղբոր կին**: Չորրորդ իմաստային շղթան ընդգրկում է մեկ հասկացություն՝ **թոռ**:

**Երրորդ գլուխը** վերաբերում է ձեռքբերովի ազգակցական հարաբերությունների անուններին (առաջին իմաստային շղթա՝ **ամուսին**, **կին**, երկրորդ իմաստային շղթա՝ **այրի**): **Չորրորդ գլուխը** վերնագրված է **միջնորդավորված ձեռքբերովի ազգակցական հարաբերությունների անուններ**: Դրանք են **սկեսուր**, **սկեսրայր** (առաջին շղթա), **տեգր**, **տալ**, **տեգերկին**, **տեգերկին** (երկրորդ շղթա), **զոքանչ**, **աներ** (երրորդ շղթա), **աներծագ**, **քեմի** (չորրորդ շղթա) և հինգերորդ իմաստային շղթա՝ **հարս**, **փեսա**:

Վերջին՝ հինգերորդ գլխում քննվում են **կնքահայր**, **կնքամայր**, **քահանա**,

<sup>1</sup> Հ. Խաչատրյան, Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում, Երևան, «Լուսաբաց» հրատ., 2009թ., 316 էջ:

**երեցկին** անվանումները, որոնք համարվում են ծիսական հիմքով ձեռքբերովի ազգակցական հարաբերությունների անունները:

Յուրաքանչյուր զխում տվյալ հասկացության քննությունը կատարվում է տարբեր հայեցակետերից. ըստ տարածքների բերվում են բառերի հնչյունական բոլոր տարբերակային ձևերը, նշվում են նկատված որոշ գործառական և իմաստային յուրահատկությունները, առանձնացվում են բնիկ և փոխառյալ միավորները, համառոտակի շոշափվում են բառաքննական—ստուգաբանական հարցեր: Հեղինակը երբեմն առաջարկում է նոր ստուգաբանություններ, որոնց մի մասը, մեր կարծիքով, ընդունելի է կամ գոնե ուշադրության արժանի: Համոզիչ են օրինակ, Վանի բարբառի որոշ խոսվածքներում փաստված **պապկե, պապկա** «պապ» բառածնի վերաբերյալ հեղինակի բացատրությունը (էջ 103), ուշագրավ է **դայա, դայե, դայո** բառածների մեջ հայերեն արմատ տեսնելը և հիմնավորելը (էջ 110), Շատախի բարբառի **տերտերակին** հասկացության **տըրխտրի** բառածնի բաղադրիչների հարցի պարզաբանումը և այլն:

Հեղինակի տվյալներով 140 բառանվանումների գրեթե կեսը հնդեվրոպական արմատներ են, որոնցից մի քանիսը վկայված չեն գրավոր հուշարձաններում: Փոխառյալ միավորները առանձնացվում են ըստ փոխառության աղբյուրների: Առանձնացվում են նաև անստույգ ծագում ունեցող բառանվանումները: Ակներև է ատենախոսի՝ բառաքննական աշխատանք կատարելու հմտությունը, գիտական զգուշավորությունը: Միևնույն հասկացությունն արտահայտող նույնարմատ և տարարմատ բազմաթիվ բառերի առկայությունը վկայում է հայերենի բարբառների այդ շերտի հարուստ բառապաշարի և բառածների մասին, իսկ այդպիսի բառածները իրոք բազմաթիվ են և անցնում են քերես 1000-ի սահմանը: Բավական է նշել, օրինակ, որ ըստ Հ. Խաչատրյանի կազմած աղյուսակի՝ **մայր** արմատով վկայված է 16 ձև՝ **մայր, մ'ր, մօրո** և այլն: Նույն հասկացության **մամ** արմատը հանդես է գալիս 11 ձևով, **ման—ը**՝ 5 և այլն: Ավելացնենք, որ հեղինակը բերում է նաև **մայր** հասկացության այլ՝ շուրջ 40 անվանումներ՝ նշելով համապատասխան տարածքները:

Գրեթե նույնպիսի մանրամասնությամբ ներկայացված են նաև ազգակցական հարաբերություններ նշող մյուս բառերը:

Անպայման հաջողված ենք համարում իմաստային ճյուղավորմամբ կամ փոխաբերացմամբ առաջացած բարբառային բառերի քննությունը:

Կարելի է թվել գրքի այլ արժանիքներ. անժխտելի է, որ գրախոսվող այս գիրքը գիտական լուրջ ուսումնասիրություն է:

Սկզբունքային դիտողություններ գրքի վերաբերյալ չունենք: Ցանկալի կլիներ միայն այն, որ ճշգրտվեին ատլասի համար հավաքված նյութերը, նրանց հավաստիությունը, տարածքային սահմանները, բացահայտվեց միավորների գործառական յուրահատկությունները՝ կապված այլևայլ գործոնների հետ (իրադրական, ոճական, կիրառության հաճախականության, տարիքային սահմանի և այլն):

Գրախոսվող աշխատանքը որոշակի ներդրում է հայ բարբառագիտության քննադավառում:

**Լ. Շ. ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ**

բանասիրական գիտությունների դոկտոր